

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՒՍԱԲԱՆՈՂԻ ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ

ԼՐԱԳՐՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՈՉԸՆԴՈՏՈՒՄ

Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը կամ նրան տեղեկություններ տարածելուն կամ տարածելուց հրաժարվելուն հարկադրելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 200-ապատիկից 400-ապատիկի չափով:

Եթե խոչընդոտել է պաշտոնատար անձն իր պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ նա պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 400-700-ապատիկի չափով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 3 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով կամ առանց դրա:

Եթե լրագրողի կամ նրա մերձավորի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն է գործադրվել կամ դա գործադրելու սպառնալիք, ապա պատիժ է սահմանվում՝ ազատազրկում՝ 3-7 տարի ժամկետով[1]:

Ընտրությունները լուսաբանելիս լրագրողների աշխատանքին խոչընդոտելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 700-1000-ապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 3 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա[2]:

ՀՀ Քրեական օրենսգիրք

---

[1] *Հոդված 164*

[2] *Հոդված 149*

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ

Լրատվական գործունեություն իրականացնող անձինք կարող են քվեարկության օրը լուսաբանել ընտրությունները և քվեարկության ընթացքը Կենտրոնական ընտրական հանձնաժողովում (ԿԸՀ) հավատարմագրվելուց հետո:

Լրատվական գործունեություն իրականացնողը կարող է հավատարմագրել իր ներկայացուցիչներին, եթե առնվազն մեկ տարի իր անունից տարածում է լրատվության միջոց: Մեկ տարվա սահմանափակումը կիրառելի չէ <..> վերգետնյա եթերային հեռարձակողների համար:

Հավատարմագրվելու դիմումը և լրատվամիջոցի ներկայացուցիչների ցուցակը ԿԸՀ են ներկայացվում ընտրություններ նշանակվելուց հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 15 օր առաջ:

ԿԸՀ-ն լրատվամիջոցի ներկայացուցիչներին վկայականները հանձնում է դիմումն ստանալուց հետո՝ 12 օրվա ընթացքում[3]:

ՀՀ Ընտրական օրենսգիրք,

---

[3] *Հոդված 31*

ԼՐԱԳՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Լրատվամիջոցների ներկայացուցիչներն իրավունք ունեն ներկա գտնվելու ընտրական հանձնաժողովների նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև այդ սենյակում: Նրանք կարող են լուսանկարել, տեսանկարահանել ընտրական հանձնաժողովների նիստերը (այդ թվում՝ քվեարկության արդյունքների ամփոփման նիստը), քվեարկության ընթացքը՝ չխախտելով ընտրողի քվեարկության գաղտնիության իրավունքը[4] և վերահաշվարկի աշխատանքները[5]:

Լրագրողը պետք է գրանցվի ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում և պարտավոր է ընտրական հանձնաժողովում, ինչպես նաև քվեարկության սենյակում ներկա գտնվելիս տեսանելի ձևով կրել ԿԸՀ-ի կողմից տրված վկայականը[6]:

Քվեարկության սենյակում իրավունք ունի միաժամանակ ներկա գտնվել յուրաքանչյուր լրատվամիջոց ներկայացնող մեկ լրագրող և մեկ լուսանկարիչ կամ մեկ օպերատոր[7]:

ՀՀ Ընտրական օրենսգիրք

---

[4] *Հոդված 8, մաս 11*
[5] *Հոդված 50, մաս 14*
[6] *Հոդված 32, մաս 4*
[7] *Հոդված 65, մաս 6*

Լրատվամիջոցի ներկայացուցչի՝ Ընտրական օրենսգրքով (ԸՕ) սահմանված իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում: Ոչ ոք (այդ թվում՝ ընտրական հանձնաժողովները) իրավունք չունի զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին դուրս հանելու տեղամասային կենտրոնից կամ որևէ այլ կերպ նրանց մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա գտնվելուց, բացառությամբ ԸՕ-ով սահմանված երկու դեպքերի[8]:

1. Եթե լրատվամիջոցի ներկայացուցչի կողմից էապես խաթարվել է ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը, ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ նա կարող է հեռացվել հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից :
2. Եթե լրագրողների և դիտորդների ընդհանուր թիվը քվեարկության սենյակում 15-ից ավելի է, և դա ակնհայտորեն խաթարում է քվեարկության բնականոն ընթացքը : Այս դրույթը չի տարածվում միայն վերգետնյա եթերային հեռարձակողների ներկայացուցիչների վրա:

Լրատվամիջոցների ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատությունում և ռազմաբժշկական հաստատությունում քվեարկության կազմակերպմանը :

Լրագրողն իրավունք ունի բողոքարկելու ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը կամ անգործությունը, եթե գտնում է, որ խախտվել են իր իրավունքները :

ՀՀ Ընտրական օրենսգիրք

---

[8] *Հոդված 32, մաս 5*
[9] *Հոդված 31, մաս 8*
[10] *Հոդված 65, մաս 7*
[11] *Հոդված 56, մաս 2*
[12] *Հոդված 48, մաս 3*

ԼՐԱԳՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ

Լրագրողն իրավունք չունի միջամտելու ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և քվեարկության ընթացքին, իրականացնելու քարոզչություն, ցուցումներ տալու ընտրական հանձնաժողովի անդամներին, ներկայացնելու պահանջներ[13]:

Լրատվամիջոցի ներկայացուցիչն իրավունք չունի օգնել քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողին[14]:

ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք

---

[13] *(ՀՀ Ընտրական օրենսգիրք, հոդվ. 32, մաս 3)*

[14] *(ՀՀ Ընտրական օրենսգիրք, հոդվ. 67, մաս 9)*

ՎԻՐԱՎՈՐԱՆՔ

Վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է[15]:

Այսպիսով, պետք է միաժամանակ առկա լինի երեք հանգամանք.

1. արտահայտությունը պետք է կատարված լինի հրապարակային եղանակով,
2. արտահայտությունը պետք է լինի անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող,
3. արտահայտությունը պետք է կատարված լինի անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն ***արատավորելու դիտավորությամբ:***

Հրապարակային արտահայտությունը կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է գերակա հանրային շահով:

ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք

---

[15] *Հոդվ. 1087.1, մաս 2*

ԶՐՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Զրպարտությունն անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը[16]:

Այսպիսով, պետք է միաժամանակ առկա լինի չորս հանգամանք.

1. հայտարարությունը պետք է լինի փաստի մասին (փաստացի տվյալներ),
2. հայտարարությունը պետք է ներկայացված լինի հրապարակային եղանակով,
3. հայտարարությունը պետք է չհամապատասխանի իրականությանը,
4. հայտարարությունը պետք է լինի անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող:

ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք

---

[16] *Հոդվ. 1087.1, մաս 3*

ԷԹԻԿԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Լրագրողը պարտավոր է՝

- բոլոր կուսակցությունների և թեկնածուների նկատմամբ լինել հանդուրժող, չվիրավորել նրանց անձը, չծաղրել նրանց հայացքներն ու տեսակետները,
- չհրապարակել թեկնածուների հասցեին զրպարտություն, շանտաժ ու սպառնալիք պարունակող նյութեր,
- բոլոր թեկնածուներին իրենց ծրագրերը և տեսակետները ներկայացնելու համար լրատվամիջոցում հավասար հնարավորություն տալ, վճարովի տեղ կամ եթերաժամ հատկացնելիս՝ լրատվամիջոցում ապահովել հավասար սակագնային պայմաններ,
- չհրապարակել քողարկված քաղաքական գովազդ պարունակող նյութեր,
- հեռարձակվող լրատվամիջոցները պետք է ձեռնպահ մնան որևէ կոնկրետ թեկնածուի կամ կուսակցության աջակցելուց, իսկ տպագիր և առցանց լրատվամիջոցները նման մտադրություն ունենալու դեպքում այդ մասին նախապես և հստակ հայտարարեն:

Հայաստանի լրատվամիջոցների եվ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր, Սկզբունք 7

MEDIA INITIATIVES CENTER

IMS

Հուշաթերթիկը պատրաստել է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը դանիական International Media Support (IMS) կազմակերպության ֆինանսավորմամբ իրականացվող «Նախընտրական տեղեկատվական աջակցություն» ծրագրի շրջանակում:

«Վիրավորանք» և «զրպարտություն» բաժինների պատրաստմանն աջակցել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնը:

FREEDOM OF INFORMATION CENTER OF ARMENIA